ԵՊՀ ՌԵԿՏՈՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Իմ շա՛տ սիրելի պարոն Հովհաննիսյան, սիրելի՛ համալսարանականներ,

Բավականին երկար մտածում էի՝ որտեղի՞ց սկսել, ի՞նչ ասել: Այս դահլիճում շատ հաճախ են կազմակերպվում ու անցկացվում մեծարման միջոցառումներ ու ցերեկույթներ՝ նվիրված վաստակաշատ համալսարանականներին, որոնց ժամանակ մասնակիցներն ամբիոնին մոտենալիս պատմում են անձնական հիշողություններ, հետաքրքիր պատմություններ: Ես շատ դեպքերում, գործունեությամբս պայմանավորված, չեմ ունենում անձնական հուշեր, բայց այսօրվա միջոցառման դեպքում իրավիճակը լրիվ այլ է. պրոֆեսոր Հովհաննիսյանի մասին ես ունեմ իմ պատմությունը, իմ ջերմ հիշողություններն ու հուշերը՝ թե՛ անձնական, թե՛ մասնագիտական հարաբերությունների ու շփումների արդյունքում:

Դավիթ Հովհաննիսյանի մասին շատ երկար կարելի է խոսել: Նա իր անձնական ու մասնագիտական որակների շնորհիվ մեծ ավանդ ունի պետության կերտման և պետականաշինության շարունակական գործում: Պարոն Հովհաննիսյանը մեր երկրի համար դժվարագույն պայմաններում, երբ չկային ֆինանսական ու անհրաժեշտ այլ միջոցներ ու ռեսուրսներ, ստանձնեց Սիրիայում ՀՀ դեսպանի պաշտոնը՝ էլ ավելի ամրացնելով այն կամուրջը, որը կապում է բարեկամական երկու ժողովուրդներին: Հենց նրա պաշտոնավարման ժամանակ Սիրիան հսկայական օգնություն ցուցաբերեց շրջափակման ու պատերազմի մեջ գտնվող Հայաստանին: Հենց պարոն Հովհաննիսյանի և նրա գործընկերների նվիրումի ու

արհեստավարժության շնորհիվ այդ դժվարին շրջանում մենք կարողացանք հաղթահարել դժվարություններն ու հաղթանակել:

Հիշում եմ, երբ նոր էի սկսել դասավանդել համալսարանում, պարոն Հովհաննիսյանից ստացա առաջարկ՝ հետազոտություն իրականացնելու Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների նորաբաց կենտրոնում, և, իհարկե, մեծ սիրով համաձայնվեցի: Հիշում եմ՝ բավականին երկար ժամանակ անցկացրի գրադարանում, արխիվներում՝ գտնելու և ուսումնասիրելու Կիլիկիայի և Էջմիածնի հարաբերությունների վերաբերյալ նյութերը, պարզելու երկու աթոռների միջև առնչությունների փուլերը, որոնք քիչ էին ուսումնասիրված, և, իհարկե, ամբողջ գործընթացը պարոն Հովհաննիսյանի վերահսկողության ու աջակցության ներքո: Թեման հետագայում մեծ հետազոտություն դարձավ, տպագրվեց տարբեր լեզուներով, ինչը շատ կարևոր էր:

Համալսարանում կան անհատներ, որոնք իրենց մանկավարժական ու գիտական գործունեությամբ ձևավորել են դպրոցներ: Պարոն Հովհաննիսյանը հենց այդ նվիրյալներից մեկն է, որի ձևավորած ու ամուր հիմքերի վրա գործող դպրոցը տալիս է իր արդյունքները՝ աշակերտների կատարած վերլուծությունների, հետազոտությունների, ինչպես նաև տարբեր ոլորտներում նրանց արհեստավարժ գործունեության տեսքով:

Սիրելի՛ պարոն Հովհաննիսյան, ևս մեկ անգամ շնորհավորում եմ Ձեր ծննդյան 70-ամյակը, մաղթում, որ դեռ շատ երկար Ձեր ներդրումն ունենաք համալսարանում: Իմացե՛ք, որ այն տեղն ու դերը, որ Դուք ունեք, այն ինչ Դուք եք ստեղծել և շարունակում եք զարգացնել, անգնահատելի է ԵՊՀ-ի և մեր երկրի համար:

Հովհաննես Հովհաննիսյան
ԵՊՀ ռեկտոր